ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

№ 10

ՏԱՐԵԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԷ

Թաւրիզում . . . . . 14 դրան
Գաւառներում . . . 20 դրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 ռբ. 50 կ
Թուրքիա . . . . . 50 ղրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանկ
Ամերիկա . . . . . 2 տոլար 50ս.

Յայտարարութիւնների վճարը՝
Առաջին երեսում տողատեղը 5 շահի
Յորրորդ « » 3 »

ՍՈՒԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
«ՄԻՏՔ»-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ԹԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրւում է գրեն պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ։

2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու։

3. Մենք մերժում ենք „ուստ“ և „ոչ“ ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը ուղղել մեր ընդունած ուղղագրութեամբ—ու—ով։

4. Շտապուած կարճ յօդուածները չեն վերադարձնում։ Ուղարկուած և շտապուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը։

5. Չի տպուի ոչ մի յօդուած, եթէ գա կեղծ անուան տակ։ միաժամանակ չի կրնայ ուած-գրի իսկական անուն ազգանունը։

6. Բաժանորդները իմանան չստա՝ պէս գէպքում շուտով տեղեկացնելու են մեզ, հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն զերծ է համարում պատասխանատուութիւնից։

7. Շտապուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս։

8. Հասցէները փոխելու համար՝ պէտք է մեզ ուղարկել 2 դրան 10 շահի։

№ 10 1912 թ. ՇԱԲԱԹ 28 ԱՊՐԻԼԻ 1912 թ. № 10

ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻ ԱՆԼՌԵԼԻ ԱՂԱՂԱԿՆԵՐԸ

I

Շատ ու շատ, անգամ ձանձրացնելու չափ շատ է խօսուել մեզանում դէպի կրթական-կուլտուրական և յատկապէս դէպի հայ յուսգրութիւնը ցոյց տուած մեր աններելի ու վիրաւորական վերաբերմունքի մասին։

Թւում էր թէ մի քանի կրկնողութիւններ կամ մատնանշումներ արդէն բաւական պէտք է լինէին այդ հարցում մեր դիւրազգաց և պատուախնդիր հասարակութեան համար։ Սակայն այդ ակնկալութիւնները մեր ժողովրդի վերաբերմամբ միայն ցնորք և ինքնախաբէական լաւատեսութիւններ են։

Ի՞նչ կուզէք ասացէք, որքան անգամ կուզէք՝ կրկնեցէք, մինչև իսկ տասնեակ անգամներով փաստ բերէք Եւրոպական ժողովուրդների ուսանելի ու խրատական օրինակները և նրանց անսահման զոհաբերութիւնն ու յառաջադիմութիւնն այդ կրթական-կուլտուրական և մասնաւորապէս դպրոցական մարզի մասին, միևնոյն է մեր հայը խուլ կմնայ այդ բոլորի հանդէպ և պինդ կը կապի իւր՝ «հոգու չափ թանգ» դրամների քսակի բերանը։

Շնորհիւ հայկական այդ աստիճան յամառութեան, շնորհիւ ամբոխաբեր ժողովրդական, աւելի ճիշտ՝ շնորհիւ հայկական չարչիութեան՝ ինչպէս Հայ կրթական-կուլտուրական հաստատութիւնները, նոյնպէս՝ և դեռ ևս աւելի հայ բուռն լրագիրները գտնուում են տրտնջապէս եղկելի, անապահով և անբաստոյգ կացութեան մէջ։

Շնորհիւ մեր հասարակութեան ոչ արժանավայել այդպիսի դպրոցական վերաբերմունքի, շնորհիւ մեր հասկացող բայց և Ցուդայի չափ արծաթամոլ հայ հասարակութեան չարչիական զազիր հաշիւների՝ հայ թերթերը, գրեթէ, միշտ մի անլուսելի աղաղակ են բարձրացնում, թէ մեռնում են ֆնտէրութիւնից մեր կրթական հաստատութիւնները, թէ օրհասական վիճակում են թերթերը և ստիպուած են վերջ տալ հրատարակութեան, որովհետև հասարակութիւնը օգնութեան չի հասնում նրանց, որովհետև պարոնայք բաժանորդները ամիսներ շարունակ թերթ ստանալուց յետոյ, չեն բարեհաճում մրտածել որ պարտաւոր են եւ վճարել. կամ բարեհաճում են, երբ դրամի անուն էք տալիս, յանքերը կիտած պատասխանել՝ թէ «ով էր խնդրել որ թերթ ղրկէիք» կամ՝ «ինչ էք գլուխ տանում»։ Հանթէ որ աստիճան հրէայ ենք մենք ու չարչիանման սակարկութիւններ անող։

Խօսենք մասնաւորապէս թերթերի մասին։

Կովկասեան մեր թերթերից որ մէկը կուզէք վերցրէք և դուք յաճախ, այն էլ առաջին երեսում, կտեսնէք այսպիսի տողեր։ «Խնդրում ենք մեր գործակալներին և բաժանորդներին փութալ փակել իրենց հաշիւները»։ Եւ երբ այդ բազաքավարի խնդիրները չեն օգնում՝ շարքաշ ու պարտքերի տակ հեծող խմբագիրները ստիպւում են իրաւացիօրէն սպառնալ, թէ՝ «եթէ մինչև այս ինչ ժամանակ դրամներ չհասցնէք, ստիպուած կլինինք թերթի առաքումը դադարցնել»։

Եւ սրանք յանդուգն, բայց պարտքերից խեղդուող խմբագրութիւնների ուժեղ կանչեր են, որ մի ականջով լսում և միւսով թողնում է մեր «կուլտուրական» հասարակութիւնը։ Եւ սրանք դառն գանգատներ են, որ առանց ցնցուելու և իրանց վրայ առնելու՝ կարդում ու անցնում են անպարտաճանաչ, և ձրիասէր բաժանորդները, որոնք շատ լաւ գիտեն, որ թերթի իւրաքանչիւր մի համարի թուղթը, տպագրութիւնը, գրաշարները, սրբագրողները, ցրիչը, պոստը և այլն ահագին ծախքեր են պատճառում այդ բոլորի համար կանխիկ վճարող և ոչ երկնքից՝ այլ բաժանորդներից փող սպասող հայ խմբագրութեանց։

Դա միանգամայն ծաղր և սպանիչ հեգնանք է մեր ժողովրդեան հասցէին, որ սիրում է կոչուել Երևելի Հոլանդացի կամ Շուէյցարացի։

Հայը տալիս է ամեն ինչի, շռայլութեան, զեղխութեան, պէս պէս... կամապաշտութեան։ Նա մինչև իսկ հարևանին կամ մրցակցին կործանելու համար հարիւրներով կերցնում է այս ու այն փաստաբանին, բայց դրանց $^1/_{100}$-ը չի տալիս լուսաւորութեան գործին և չի տալիս, գրեթէ, ոչինչ իւր հատ ու կէնտ թերթերին, որոնք նրա մտքի կերն են և հոգու ճրագը։

Հայերիս մէջ ամեն տեղ և յատկապէս այստեղ Թաւրիզում դպրոց, եկեղեցի, թատրոն, գրադարան լրագրութիւն, զանազան տեսակի և անուան ընկերութիւններ և այլն ծանրացած են միայն nrnc բուռով մարդկանց վրայ, որոնք՝ որպէս մշտական և յօժարակամ հարկատուներ՝ վճարում են վերոյիշեալ հաստատութեանց համար։ Սակայն անդին մրնում են շատ հարուստներ մնում են շատ ու տարուկ և փափուկ ապրող մարդիկ, որոնք ապգային և ոչ մի հիմնարկութեան համար ոչինչ չեն վճարում։ Չափազանցութիւն չի լինի եթէ ասենք, որ այդ կղզիացածները տասը տարիներով չեն երևում ոչ իրենց սիրած եկեղեցիներում և ոչ մեր թատրոններում և անպատիւ չլինելու համար՝ աշխատում են իրենց հայ ցոյց չտալ, այլ՝ Եւրոպացի։ Իսկ պիտենդիաներ յայտնելու ժամանակ այս ոչ-հայերը ուրիշին ոչ տեղ, ոչ ժամանակ են զիջում։

Եթէ մեծամասնութիւն կազմող անտարբերների, կղզիացածների այս հսկայ զանգուածը միւսների նման վճարող, գիտակից, պարտաճանաչ, ձեռնառատ և՝ իր ազգային պարտականութեանց կատարմանը ուշադիր ու փութեռանդ լինէր՝ մեզանում ամեն ինչ ապահով ու բարեկարգ կլինէր և թերթերն էլ չլինին բարձրացնի իրանց սովորական դառած աղաղակները և ոչ էլ նոցա պոստարկղները, որպէս շեփոր, կհնչեին «բարեխիղճ» բաժանորդների ականջին իրենց պարտահատոյց լինելու մասին։

Այսպիսի դէպքում անգամ գիւղերն ի վիճակի կլինէին պահել դպրոցներ, գրադարաններ ու թերթեր։ Այսպիսի դէպքում, օրինակ, հէնց մեր Թաւրիզը միայն բաւական էր որ ապահովէր իր կրթական հաստատութիւնները և մի թերթ; առանց գաւառի և արտաքսման աջակցութեան կամ բաժանորդագրութեան։

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՐԱՄԱԳԼՈՒԽԸ—ԹՂԹԻ ՎՐԱՑ

Մերի հասարակական հիմնարկութիւններն ի՞նչ միջոցներով են կառավարում կամ թէ ինչ հաստատուն եկամուտներ ունին։

Հարցը հասարակական է և շատ հետաքրքիր, անշուշտ, եթէ գոնէ հետաքրքրուողներ։ Հասարակութեան դէպի դպրոցները ցոյց տուած վերաբերմունքի մասին խօսելը ուրիշ անգամուան թողնելով, վերցնենք այդ հիմնարկութիւններից մէկը, Արամեան դպրոցը և տեսնենք ինչ գումարներից է կազմուած նորա դրամագլուխը։ Ներկայ հոդվարածութիւնը ստացել է իր նախորդներից հետևեալ հաշիւը՝ իբրև դրամագլուխ։ (Թուերը վերցուած են հոդվարածութեան հաշուեմատեաններից)։

1909 թ. 1 Օգոստ. կանխիկ դրամ . . .		6 դ.	15 կոպ.
Եղբ. Թումանեանները պարտական	10000 ռուբ. ազգ.	50000 „	— „
Անգլիական բանկը պարտ է . . .		16350 „	— „
Եղբ. Նազարբէգեանները պարտ են . .		5000 „	— „
Նիկողայոս Մ. Բարաջանեանը	(հանգ) պարտ է	13438 „	— „
Գալուստ խան Վարդանեանը	(„) „	1074 „	70 „
«Սեան» ընկերութիւնը՝ սնանկացած	„	57873 „	60 „
Եղբ. Միքայէլեանները	„ „	21579 „	60 „
Ղարագաղի գիւղերը արժէ են		17752 „	— „
Դասագրքեր		1737 „	25 „
Թեմական խորհուրդը պարտ է		5444 „	40 „
Մահմատ Դովլան	„	2700 „	— „
Պարսից կառավարութիւն	„ (10 տարուայ նպ.)	20000 „	— „
Նիւթեպի խանը	„	1200 „	— „
Թերայոյս սանալիքներ 1)			
Մամեդ խան Զալարեանի	1000 „ — „		
Ծատուր խան Սէթխանեան	1120 „ — „		
Աւագ խան Աֆթանդիլեան	99 „ — „	2219 „	— „
Ատուածածնի այգու վարձակալը		29 „	30 „
Թեմական տպարանը		2627 „	50 „
Ռուսաց կառավարութիւնը (4 տ. նպ. 2200 մ.)		11000 „	— „
Արրահամ բէկ Դոլուխանեանը		12734 „	70 „
Ալէքսան Միքայէլեանը „		48 „	05 „
	Գումար . . .	242814 դ.	25 կ.

Ինչպէս տեսնում է ընթերցողը, դրամագլուխն ունի մի պատկառելի գումար, ուրեմն շատ հեշտութեամբ կարող է կառավարուել այդ դրամագլխի տոկոսներով

1) Իբր թէ միւսները յուսալի են։ Տ. Կ.

և թշնամկերոջ։ Հապա էլ ինչ են ցգահլայ մանում։ Հոգաբարձուները ամեն անգամ հասարակութեան դիմելով և դպրոցի համար փող մուրալով, որ «պատիւ չի բերուիր»։ Այսպես պիտի մտածէ քրիստոնեայ մի ընթերցող և այլապես անկարելի թուղտարով երևոյթը։ Բայց տեսնենք իրա՞ք դպրոցն այդչափ դրամագլուխ ունի՞ և ապահովուա՞ծ է, և թէ հոգաբարձութիւնը շահագործո՞ւմ է մեր դէպի դպրոցն ունեցած սէրն ու գուրգուրանքը», ամեն անգամ դպրոցի աննախանձելի վիճակը նկարագրելով և թատրոնի տոմսակներ առաջարկելով՝ ի վնաս մեր գրպանի։ (Կարող ենք ՄԷՏԻՍ տալ այդպէս մտածողներին, որ Արամեան դպրոցի հոգաբարձութիւնը վճռել է այլևս տոմսակներ չուղարկել յարգելի հասարակութեան և չը խանգարել նրանց հանգիստը, անտեղի կերպով։ այդպէս հէնց վերջին երկու նիկայացումները)։ Միքանի կնոջիզներ այդ առթիւ։ Հոգաբարձութեան ուղարկած տոմսակները դարձնում են զուարճալի մակագրութիւններով՝ ծրարի վրայ գրած։ մէկը գլուխ է—շնորհակալ եմ, մի ուրիշը՝ ժամանակ չունիմ, մի ուրիշը՝ եթէ գայլ լինեմ, ինքս տոմսակ կվերցնեմ։ մի չորրորդը՝ ես անձամբ կվճարեցնեմ (ինչքա՞ն պարտաճանաչութիւն)։ Իսկ ամենից զուարճալին հետևեալն է։ Թոշակների առթիւ ինչպիսի հոգաբարձութեան կողմից տպագրած յայտարարութիւն է ուղարկուում—ծրարի մէջ, որով խնդրուում է վճարել մնացած թոշակները։ Թատրոնի փրքի ժամանակ Յանկարծ մէկը հարցնելու է մտնում՝ նրան և յանձնում պատեշին մի ծրար—չբացուած, յայտնելով, որ թատրոնի տոմսակ արդէն վերցրել են։ Այնքան վախ է ազդել այդ խեղճ ծրարը, որ չեն համարձակուել բաց անել անգամ, երևի վախենալով, որ ծրարի միջից կարող է յանկարծ ռումբը պայթել և տունը կործանել և աշխատել են անմիջապէս ազատուել այդ տակաւի ծրարից... Վերջը իհարկէ, պարծեցին ծառայքն, որ տոմսակ չեն թող բարեհաճեն բաց անել և կարդալ վտանգաւոր ոչինչ չկայ (մանաւանդ որ ամիսներում յայտարարուած է, որ տոմսակ ոչ ոքի չի ուղարկուում)։

Բայց թողնենք կուրիոզները և դառնանք դպրոցի դրամագլխի քննութեան։ Կանխիկ դրամ 6 ղ. 15 կ. փոստահելի է. Եղբ. Թումանեանների մօտ 10000 ր. այդ էլ հաստատ է. Անգլիական բանկ 16350 ղ. այդ էլ հաստատ է. Եղբ. Նազարբէգեաններ 5000 ղուան, այդ էլ հաստատ է. Նիկողայոս Մել Բարաջանեան 13438 ղ. այդ գումարը տրուած է գրաւականով և հակառակ քանիցս դիմումներին, վճարելու տրամադրութիւն չի երևում, մանաւանդ որ Նիկողայոս Մէջ Բարաջանեանը մեռած լինելով (ինքնասպան եղաւ) մնացել է այրին և, կարծեօք, անչափահաս որդին։

Գալուստ խան Վարդանեան 1074 ղ. 70 կ. այդ առթիւ ևս դիմումն եղել է հանգուցեալի այրուն, սակայն երևի անյարմար է համարուել պատասխանել անգամ։ Գալիս է Սեան ընկերութիւնը՝ 57873 ղ. 60 կ. Ընկերութիւնը վաղուց սնանկացել է, սակայն տարէցտարի տոկոսներ են բարդուում այդ պարտքի վրայ և նրշանակում իբրև դրամագլուխ։ Քանիցս այդ առթիւ դիմումներ են եղել, սակայն անլսող։ Զգիտենք այդ վերագրել պահանջողների թուլութեան, թէ պարտապանների հաստատակամութեան՝ չվճարել ազգային դպրոցներին պատկանող գումարները։ Ներկայ հոգաբարձութիւնը ևս դիմումներ արել է, նոյնիսկ դիմել է պատգամաւորական ժողովին և անօրինութիւն խնդրել, սակայն Արարատեանի գերագոյն ժողովը «օձիքն ազատելու» համար և այդ տեսակ «անպէտք և մանր գործերով» հետաքրքրուելը երևի իրա ՀԳերագունութեան։ վերաւորական համարելով—որով հետև «զբաղուած էր» շատ աւելի «այժմեական» և «կարդինալ» խնդիրներով, բարեհաճեց դանձնարարել՝ «գիմել օրինական իշխանութեան»!!!

Ցաջորդ անգամին թողնելով ներկայացնել հասարակութեան այդ «սնանկացած անդամների ներկայ ապահով դրութիւնը—իւրաքանչիւրին առանձին վերցրած յականէ յանուանէ, շարունակենք քննութիւնը։

Եղբ. Միքայէլեանները 21579—60 կ. սնանկացած. թէ որքան վստահելի գումար է այդ, առաջ ենք բերում ներկայ հոգաբարձութեան դիմումին ի պատասխան Սասունի բէկ Միքայէլեանի նամակի մի կտորը՝ մեծագոյն հարգանութեամբ։ Ցայտնելով, որ իրենց գործերը թէՀլան «Վարդանը խարիջոնն են գտնում», պարոնը տեղեկացնում է «այժմ էլ կարող էք թէՀլան Վարդան խարիջին դիմել, ինձ չի վերաբերում Եղբայրք Միքայէլեանցի հաշիւները» (???), չնայած որ մուրհակն ստորագրել է ինքը։ Ղարադաղի խանները 17752ղ. երկու տարի է, (խօսքը ներկայ հոգաբարձութեան մասին է) որ տիրող քաղաքական խառնակութիւնների պատճառով ոչ մի արդիւնք չի ստացուում և աւելին, գիւղացիներին կամայականութիւններից ազատելու համար վճարուած է դպրոցի հաշուին պետական հարկը—ապագայում գիւղացիներից գանձելու համար։ Դասագրքեր 1737—25 սրանք էլ անլուսաւորների շարքը պիտի դասել, որովհետև անգործածելի են այժմ։

Թիմական խորհուրդը 5444—20, այդ գումարը ստացուել է։ Մօթամադ դովլից 2700 ղ. ով է, ի՞նչ մարդ է, ինչո՞ւ է վճարած՝ յայտնի չէ, միայն տետրակում անունը և դրա դիմաց էլ 2700 ղուան կայ նշանակած։

Պարսից կառավարութիւն (10 տ. նպ.) 20000 ղ. մի մեծ կարմիր խաչ քաշել այդ կորիկ գումարի վրայ (թէպէտ վերջին երկու տարիների նպաստը, շնորհիւ ներկայ հոգաբարձութեան հետամտութեան ստացուել է)։ Զգիտենք այդպիսի մի գումար ինչո՞ւ է ցարդ մնացել, երբ, մեր կարծիքով, ամենայն հիշատակամբ այդ ժամանակներում կարելի էր գանձել տարէցտարի, մանաւանդ ինկապի ունենալով կառավարութեան բարեացակամութիւնը և ժամանակի վարիչների բաբեկամական յարաբերութիւնը կառավարութեան ներկայացուցիչների հետ։

Նիթֆալի խան 1200 ղուան. ով է՞, ինչո՞ւ է տրուած այդ գումարը, կամ ինչո՞ւ է մնացել չգանձուած,—յայտնի չէ։

(Կը շարունակուի)

Տ. Կարեան

ՀԱՒԱՏՔ Ի ՄԷՋ ՄԱՐԴ, Ի ՄԱՐՄԻՆ, Ի ՀՈԳԻ ԵՒ Ի ՄԻՏՔ.

(Նուէր առ յարգելի խմբագիրն «Միտք» Շաբաթաթերթի)։

I

Մի ակնարկ եթէ ձգենք մեր հասարակական կեանքի վրայ՝ մենք այնտեղ կտեսնենք շատ խոշոր պակասութիւններ, բակմազան զեղծումներ ու թերութիւններ, որոնք օրէ օրը աւելի զգալի, պէտք չօշափելի և ուշագրաւ են դառնում։ «Զորն ասեմ և զմրն խոստովանիմ, զի բաղումք են յանցանք իմ» արտայտիչ մի ասացուածք է այս մասին։ Մենք ցանկանում ենք այս անգամ մասնաւորապէս մի շատ ցաւալի հանգամանքի վրայ ուշադրութիւն հրաւիրել, որը բնոյզ, բնաղատող, անաչառ գրողի լուրջ նկատողութիւնից չի կարող վրիպել։ Այդ խորը արմատ կապած վէրքը ընթերցասիրութեան պակասութիւնն է մեր ժողովրդեան շրջանում։ «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ այլ Բանիւ» խիստ բնորոշ մի ճշմարտութիւն է մանաւանդ մեր հասարակութեան համար, որը ընդհանրապէս մի բանով միայն հեռաքրքրուած է իւր բովանդակ կեանքում և դա հայի, նիւթականի, փողի, հարստանալու խնդիրն է։ Մեծ ու պզտիկ, հարուստ, աղքատ, այրեկին, մինչ իսկ դեռատիներն էլ, իրենց բովանդակ միտքն ու խորհրդածութիւնը բացարձակօրէն այդ հարցի վրայ են կենտրոնացրել և նրա շուրջն է դառնում իրենց ամբողջ գոյութեան նպատակը։ Նրանց առօրեայ և մշտնջենական մտածողութեան առարկան է հանդիսանում ինչ անել լաւ չքեղ, կարելի եղածին չափ շիք տալու համար, նրանք գիշերցերեկ անդադար միտք են յագեցնում միջոցներ ստեղծելու, որով հնարաւոր լինի քիչ ժամանակի ընթացքում «անիրաւ Մամոնայի» ձեռքից կարելի եղած չափով մի խոշոր կտոր ոսկի կորզելով իրենց վիճակը նիւթապէս բարելաւել և անստոյգ ապագայն կատարելապէս ապահովել։ Այդ ջանքերը, այդ անհոգնջ աշխատանքները, այդ ձգտումներն և մրցումները ըստ ինքեան ոչ միայն դատապարտելի չեն, այլ ամեն գովասանքի քաջալերութեան և գնահատման արժանի են։ Միայն թէ պէտք է ասած, որ այդ բոլորը մարմնի համար է լոկ և այդ չափով բաւականացող ամեն մարդու համար վճռաբար կարելի է ասել, որ նա ապրում է այնպէս ինչպէս որ ուրիշ բոլոր կենդանիները ապրում են նրա շուրջը. այդպիսի մարդկանց (որոնք լէգէօն են կազմում ամեն տեղ) նշանաբանն—մօտաւոր «Ուտենք խմենք, ինչու որ վաղը մեռնելու ենք»։ Եւ որքան ցաւալի է տեսնել որ համարեա թէ մարդիկ առհասարակ միայն այդ նպատակի համար ապրելով բնականաբար կատարելապէս մոռացութեան են տալիս աւելի մեծ կարևորութիւն ունեցող աւելի գերազանց նշանակութիւն ունեցող հարցեր և խնդիրներ, որոնք մարդկային կեանքի զարգացման, բարգաւաճման, առաջադիմութեան և երջանկութեան համար անժխտելիօրէն նշանակալից են և որոնց զանցառումովը մարդիկ անհաշուելի կորուստներ են ենթարկում իրանց։

II

Այլասերում, ստորանում և թշուառանում է մարդը, երբ նա ծառայում է միայն իր մարմնոյն, երբ նա ծառայելիս է լինում իւր նիւթական գոյութեանը և այդպիսի անդամներից բաղկացած ընտանիքներում, համայնքներում և ամբողջ ժողովրդներում և ազգերում դուք պիտի գտնէք հոգեկան, բարոյական և իմացական՝ որ նոյն է մտաւորական անկում, աւերում և մեռելութիւն. այդտեղ լիովին տիրապետում է մարմնական «ես»ը, որին զոհ է դառնում ամեն ազնիւ, բարի, սուրբ և նուիրական սկզբունք և ըղձացում, ձգտում և գործունէութիւն՝ հասնելու մշտական չարժման մէջ է, դալիս ու գնում են չարունակ անթիւ ու անհամար յաճախորդները, գնողներ ու ծախողներ, ապարանի գործաւորները, հեղինակներ և հրատարակիչներ։ Իսկապէս դա մի մտաւորական մեքենայ է, որի տրպագրեալ միտքը ամբողջ գործունէութեան անթառամ արդասիքն է։

Մի ոստինով ես բարձրացայ առաջի յարկը և ցանկանում էի մուտք գործել այն սենեակը, ուր մասնաւորապէս հեղինակներին են ընդունում։ Սակայն փակ էր սենեակի դուռը և ներսից մի ինչ որ ձայն էր լսւում. դիլիգէնսը զբաղուած էր։ Մի նստարանի վրայ բազմեցայ ըսպասելու իմ հերթին և յիշողութեանս մէջ կենդանացաւ այն յուզմունքը, որով ես առաջին անգամ այդտեղ եկել էի։ Սրտի ի՞նչ բաբախումով բարձրացել էի ես այն օրը այդ սանդուխքով, թեպետ տակ ունենալով իմ ձեռագիրը։ Եւ երբ ես ներս մտայ։ Մասօլի գլխաւոր, դիպիսի մի սարսուռ տիրապետել էր ամբողջ մարմինս։ Նա ինձ ընդունել էր թէև շատ քաղաքավարի կերպով, բայց շատ սառն էր այդ ընդունելութիւնը։ Եւ նա իրաւունք ունէր։—Մի 20 ամեայ պատանի, բոլորովին անծանօթ որ գալիս էր նրան, գիտէք ինչ բերելու,—ուտանձիորներ... մի գրական ուշադրութիւն որը սակայն բոլորովին էլ չի վաճառուում գրատուներում։ Մի ուսման թերեւս կարելի է առնել կամ ծախել, բայց ոտանաւորներ...

Բայց և այնպէս նա համաձայնել էր այն տեսն հրատարակելու իմ գրուածքը, պայմանաւ որ ես ինքս հայթայթէի տպագրութեան ծախքը։ Ինչ արած, պէտք է ընդունել առաջարկութիւնը և սկսեցինք գործին։ Ատուած իմ, որպիսի յուզմունքներով կատարուեց իմ գրքի այդ առաջի տպագրութիւնը։ Փորձի թերթերը, որոնք թաց-թաց մամուլից դուրս եկած ինձ էին տրուում, լիքը սխալներով, որոնց սրբագրելիս դուք համբերութիւնիդ կորցնում էք և ցնցում հատուում, մտածելով որ դրան վերջն ու վախճանը չի գալու. բացի սովորական տառասխալներից՝ քերականական սայլանդակութիւնները, տակն ուվրայ եղած կէտադրութիւնները, ոգի և խօսքերի խեղաթիւրումները, վերջապէս մի քաօսային բան, որի մէջ խեղճ հեղինակը հնարաւոր է կարող է ինքզինքը նորից գտնել։ Յետոյ դրաշարների հետ անվերջ անվախճան կռիւներ, որոնց դուք բարկանալիս ապուշներ էք կոչում և նրանք էլ ձեզ «իմաստակ» տիտղոսով են մեկնում փոխադարձաբար։ Երբ այդ բոլորը վերջացել է. դուք պէտք է մեծ խնամքով պատրաստէք գրքի ցանկ նիւթոցը և հոգինիդ պիտի հանէք մտածելով հնարելու այնպիսի մի ճաշակաւոր, յուզիչ գրաւիչ անուն ձեր գրքին, որ պէտք գնողի աչքը դուրս գայ, ձեր տեղից նրան տեսնելիս, բառի բուն նշանակութեամբը սիրահարուի նրան... Այդ դեռ բաւական չէ, այլ մնում է տակաւին որոշել գրքի կողքի թուղթի գոյնը՝ որը նոյնպէս մեծ նշանակութիւն ունի գիրք տպագրելու գործում։ Ի վերջ ամենայնի, այսքան դժուարութեամբ ծախքով և հազար ու մի նեղութիւններով ու տանջանքներով և տենչանքներով լոյս է տեսնում ձեր գիրքը և դուք տեսնելով նրան դրպճառանոցների պատուհաններում ի ցոյց դրուած, որտեղից նա ձեզ ժպտագին նայում է անցնողին և դուք հրճւում ու հպարտանում էք։

(Շարունակելի) Մ. Ի.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԵՒ ՕՐԵՐ

Այս գարուն օրերին հասիր օգնութեան,
Իմ ընկեր—Մուսա
Ցաւի ու արեան մէջ է իմ վաթան,
Քաղցրախօսդ Մուսա։
Մենք զոհ ենք դարձ նենգ խաբէութեան.
Անարգ բռնութեան.
Լեզուս կապուած է լուռ զարհուրանքից
Հասիր, ո՛վ Մուսա։
Ո՞ւր ես ո՛վ Մուսա, Ընկեր վաղեմի,
այս դառը ժամին
Արի պատմեմ քեզ ցաւերս մի առ մի
քո բարեկամիս
Թէ երբ հեռացար, ես այն օրուանից
տխո՛ւր, միայնակ
Հոգիս վրդովուած, մտքերիս ծովում
խո՛ր և անյատակ
Խեղդուում եմ անյոյս և ոչ մի տեղից
սփոփող չկայ.
Ցաւս է կուտակուում, կոկորդս սեղմուում.
Հասիր ո՛վ Մուսա։

Թաւրիզ Լ. Էմանուէլ

ՄԻ ԳՐՔԻ
ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ *)
(Ժագ Նոռման)

—Ի՞նչ կայ որ, ինչ է պատահել, սիրունիկը։ Եւ կիսաբաց դռնից երևաց մեծ հօրս պատկառելի դէմքը, բարի և ժպտագին։ Նա մաքուր ածիլուած էր, և խոշոր քթի վրայ մի զոյգ ակնոցներ ունէր, որոնց տեսնելից ուրախ աչքերը փայլում էին։ Նրա կեղծ ծամը լաւ սանդրուած՝ չքաւորում էր իւր ալեոր երեսի վարպագոյն կնճիռները։

—Թէ ինչ է պատահել ինձ, սո՛ կարդա՛ և կիմանա՛։

—Էհ ինչ է եղել չոր, ասեց նա երկողը կարդալուց յետոյ, քո բանաստեղծութիւնները բաւականաչափ գեղեցիկ են, գոնէ ինձ այնպէս է թուում։

—Բայց երևակայեցէք, սիրելի հայրիկ, սա մի բոլորովին անմպակելի յաջողութիւն է, նկատելով որ մարդիկ այլևս ոտանաւորներ չեն սիրում կարդալ։

—Քո գրածները կնմրդում են սակայն, և դուք քեզ համար բաւական պէտք է լինի։

—Ի հարկէ, դրան ասելիք չկայ։

—Դու երջանիկ ես ուրեմն։

—Մի՞թէ այդ հարցնելու բա՞ն է։

—Եթէ այդպէս է, ես էլ ուրախ եմ քեզ հետ։ Եւ նա իւր քթախոտի տուփը հանելով գրպանից, մի պրիզ ընդունեց և պէխերը ոլորելով դոհունակ աչքերով սկսեց ինձ նայել։

Մի քիչ յետոյ ես Մասօլի գրավաճառանոցում էի։ Ամեն մարդ ճանաչում է այդ հրաշակաւոր գրադարանը Պարիզում, այդ ընդարձակ սրահը, որի լուսամուտները առաստաղից են բացուած և ուր խնամքով ու ճաշակաւոր կերպով դետեղուած գրքերի կարմիր, կապոյտ և դեղին սիւնները, գեղեցիկ մի տեսարան են ընծայում դիտողի աչքերին։ Պատերի երկայնութեամբը բալկոններ՝ զանազան բաժանումների են վերածում ամբողջ սրահը։ Այդտեղ կեանքը մշտական չարժման մէջ է, գալիս ու գնում են չարունակ անթիւ ու անհամար յաճախորդները, գնողներ ու ծախողներ, ապարանի գործաւորները, հեղինակներ և հրատարակիչներ։ Իսկապէս դա մի մտաւորական մեքենայ է, որի տրպագրեալ միտքը ամբողջ գործունէութեան անթառամ արդասիքն է։

Մի ոստինով ես բարձրացայ առաջի յարկը և ցանկանում էի մուտք գործել այն սենեակը, ուր մասնաւորապէս հեղինակներին են ընդունում։ Սակայն փակ էր սենեակի դուռը և ներսից մի ինչ որ ձայն էր լսւում. դիլիգէնսը զբաղուած էր։ Մի նստարանի վրայ բազմեցայ ըսպասելու իմ հերթին և յիշողութեանս մէջ կենդանացաւ այն յուզմունքը, որով ես առաջին անգամ այդտեղ եկել էի։ Սրտի ի՞նչ բաբախումով բարձրացել էի ես այն օրը այդ սանդուխքով, թեպետ տակ ունենալով իմ ձեռագիրը։ Եւ երբ ես ներս մտայ։ Մասօլի գլխաւոր, դիպիսի մի սարսուռ տիրապետել էր ամբողջ մարմինս։ Նա ինձ ընդունել էր թէև շատ քաղաքավարի կերպով, բայց շատ սառն էր այդ ընդունելութիւնը։ Եւ նա իրաւունք ունէր։—Մի 20 ամեայ պատանի, բոլորովին անծանօթ որ գալիս էր նրան, գիտէք ինչ բերելու,—ուտանձիորներ... մի գրական ուշադրութիւն որը սակայն բոլորովին էլ չի վաճառուում գրատուներում։ Մի ուսման թերեւս կարելի է առնել կամ ծախել, բայց ոտանաւորներ...

Բայց և այնպէս նա համաձայնել էր այն տեսն հրատարակելու իմ գրուածքը, պայմանաւ որ ես ինքս հայթայթէի տպագրութեան ծախքը։ Ինչ արած, պէտք է ընդունել առաջարկութիւնը և սկսեցինք գործին։ Աստուած իմ, որպիսի յուզմունքներով կատարուեց իմ գրքի այդ առաջի տպագրութիւնը։ Փորձի թերթերը, որոնք թաց-թաց մամուլից դուրս եկած ինձ էին տրուում, լիքը սխալներով, որոնց սրբագրելիս դուք համբերութիւնիդ կորցնում էք և ցնցում հատուում, մտածելով որ դրան վերջն ու վախճանը չի գալու. բացի սովորական տառասխալներից՝ քերականական սայլանդակութիւնները, տակն ուվրայ եղած կէտադրութիւնները, ոգի և խօսքերի խեղաթիւրումները, վերջապէս մի քաօսային բան, որի մէջ խեղճ հեղինակը հնարաւոր է կարող է ինքզինքը նորից գտնել։ Յետոյ դրաշարների հետ անվերջ անվախճան կռիւներ, որոնց դուք բարկանալիս ապուշներ էք կոչում և նրանք էլ ձեզ «իմաստակ» տիտղոսով են մեկնում փոխադարձաբար։ Երբ այդ բոլորը վերջացել է. դուք պէտք է մեծ խնամքով պատրաստէք գրքի ցանկ նիւթոցը և հոգինիդ պիտի հանէք մտածելով հնարելու այնպիսի մի ճաշակաւոր, յուզիչ գրաւիչ անուն ձեր գրքին, որ պէտք գնողի աչքը դուրս գայ, ձեր տեղից նրան տեսնելիս, բառի բուն նշանակութեամբը սիրահարուի նրան... Այդ դեռ բաւական չէ, այլ մնում է տակաւին որոշել գրքի կողքի թուղթի գոյնը՝ որը նոյնպէս մեծ նշանակութիւն ունի գիրք տպագրելու գործում։ Ի վերջ ամենայնի, այսքան դժուարութեամբ ծախքով և հազար ու մի նեղութիւններով ու տանջանքներով և տենչանքներով լոյս է տեսնում ձեր գիրքը և դուք տեսնելով նրան դրպճառանոցների պատուհաններում ի ցոյց դրուած, որտեղից նա ձեզ ժպտագին նայում է անցնողին և դուք հրճւում ու հպարտանում էք։

(Շարունակելի) Մ. Ի.

*) Տես «Միտք» № 9

բարձր իդեալական կեանքի և կենցաղի։ Այդ Իւտոպիա է այդպիսի մարդու համար... և բոլորովին գոյութեան հնարաւորութիւն էլ չունի։

Այսպէս էր մարդկութեան դրութիւնը մի-զանից 20 դարեր առաջ էլ և համանման էին դրանից առաջացած ախուր, ցաւալի և աղեսալի հետեւանքները, իսկ և յանդիման որոնց Մեծ ուսուցիչը բողոքի և զգուշացման ազդու ձայնը բարձրացրեց գոչելով «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ այլ բանիւ»։ Ի՞նչ հրաշալի և իմաստալի խօսքեր որից պարզի ամեն սիրտ խորապէս ազդուիլ, եթէ նա բարացած և մի ժայռի կտոր դարձած չէ, որ ամեն հոգու մէջ արձագանք պէտք է գտնի. եթէ այդ հոգին դեռ կենդանութեան ոլորտ նշոյլ ցոյց է տալիս, որ ամեն մարի մէջ խորապէս տպաւորուելու է, եթէ այդ միտքը չէ կորցրել իւր ընդունակութիւնը ըմբռնելու, հասկանալու և որդեգրելու այդպիսի երկնային, բարձրը ճշմարտութիւններ և կենսական սկզբունքներ։ Բողոքիչ զգուշացման այդ երկնային ձայնը այսօր էլ կրկին և կրկին ամեն առթիւ սնդադար պէտք ի հնչի մեր ականջներին՝ եկեղեցու բերանից, ճշմարիտ, պարտաճանաչ ուսուցչի բերանից հասարակութեան իրական առաջադիմութիւնը և երջանկութիւնը ցանկացող խմբակիրների, հեղանակների և հրապարակախօսների գրչից, որովհետև մարդ կոչուած էակը, այսպէս ասած, մի երբոդութիւն է—մարմին, հոգի և միտք—և միայն այդ երեք մասերի կարգացմամբը և կատարելագործութեամբը նա իսկապէս մարդ է դառնում, ամենայնիւ արժանի այդ անուան և այդ գոյութեան։ Վերցրէք այդ երեքից մինը կամ միւսները առանձին, կամ անտարբեր եղէք մէկի կամ միւսի պահանջներին և հետեւանքը անխուսափելիօրէն այն է լինում, որ մարդը ընկնում է իւր արժանավայել կատարելութիւնից և թերի, կամ խանգարած մի մեքենայի նման անկատար և ծուռ գործեր է արտադրում ի վնաս իւր և հանրութեան։

(Շարունակելի)

Միհր. Բաղդ—եան

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ
(Թուրքիկ ակնարկներ)

Ա.

Սիրելի Արաէն.

Մի քանի տասնեակ տարիներէ ի վեր այնքան սիրած հայրենիքէդ, ծնողքէդ և ազգականներէդ ակամայ բաժանուած՝ «թափառական հրէայ»-ին նման երկրէ-երկիր, քաղաքէ-քաղաք թափառելս յոգնած, յուսատած շունչդ առած ես անկիւն մէ ու կը գրես որ Ամերիկահայ բանուորներս ներկայ և անցեալ կեանքէն ուսումնասիրութիւն մ'ընեմ և քու այնքան սիրած թերթիդ՝ «Միտք»ի միջոցով հաղորդեմ քեզ։

Թէ և քո այդ փափագին, հետաքրքրութեանը լիովին գոհացում տալը կարողութենէս վեր է, սակայն պիտի ջանամ հակիրճ ուսումնասիրութեամբ մը ներկայացնել, այն յուսով՝ թէ պիտի կարենամ՝ եթէ ոչ ամբողջութեամբ՝ գէթ մասամբ մը գոհ ընել քո հետաքրքրութիւնը։

Այնքան մը բարձր իմացականութիւն խելք և իմաստութիւն չէ հարկաւոր որպէսզի կարող լինենք ըմբռնել, հասկանալ և հաստատապէս համոզուել թէ՝ կապիտալիստական արդիւնագործութեան այս Նոր-Աշխարհը, շատ կարճ ժամանակամիջոցի մէջ դարձած է անսահման և անեզր ովկիանոս մը, որու մէջ ամեն կողմէ լեցուած են այլազան ցեղերէ աշխատութիւն, գործ որոնող մարդիկ, մարդիկ սակայն՝ որոնք կապիտալի անողոք և անխիղճ կամքովը, բռնի ոյժովը կազմած են մի հսկայ և անսպառ զանգուած, միայն ու միայն ծառայելու անոր-կապիտալի—հաճոյքին, փառքին և եսին։

Աշխարհի չորս անկիւններէն, քաղաքակրթուած և ոչ քաղաքակրթուած երկիրներէն հազարաւոր, միլիոնաւոր մարդիկ, որոնք ամենայետին թշուառութեան, նեղութեան և անօրէնութեան մատնուած ըլլալով իրենց ի՛երկրի ստեղծած աննպաստ պայմաններէն՝ օրէ ցօր աճող, բազմացող կարիքներուն գոհացում տալու համար վազած են այս Կոլոմբոսի երկրի հորիզոնին տակ՝ գտնելու նիւթական էն կարևոր և էն անհրաժեշտ աղբիւրները։

Եւ սակայն այդ չքաւոր, ապրուստ որոնող, և նոյն իսկ հարստահարուող մասսան, այս ցամաքին վրայ ոտք դնելէ անմիջապէս յետոյ՝ դարձեր է անաստուած հարուստներու, անխիղճ կապիտալիստներու ստրուկը, կենդանի մեքենան, ենթարկուելով անսահման ու անպատմուելի շահագործման, շնչելով գործարաններու ծուխը ու մուխը, ապականուած և անշնչելի մթնոլորտը։

Մենք տարագրեալ դժբախտ հայերս ալ, բռնութեան ստեղծած անսանձ կամայականութիւններէն անգոհ, որովհետև անկարելի էր գոհ լինել այդպիսի վիճակից, ուր կեանքի ինչքի և ընտանիքի անապահովութիւն կը տիրէր, ուր մարդու չարաչար աշխատութեան արդիւնքը կը լափշտակուէր իր ձեռքէն, ուր անոր պատիւը և ամեն ինչ որ նուիրական և սուրբ էր անոր համար, կհալածուէր ու կը պղծուէր բարբարոսներու ձեռքով։ Արդարև անոնք այս անտանելի կացութենէն, անվերջ հալածանքներէն և շարունակ կրկնուող չարդերէն ազատուելու համար, ահագին ծովերէ և ովկիանոսներէ անցեր, տուն ու ընտանիք թողեր և ընկեր են այս անծանօթ և խորթ աշխարհի հորիզոնին տակ։

Բայց միայն բռնութիւնն ու հալածանքը չէր որ Հայը թողուց իր երկիրը և գաղթեց։ Ուրիշ բան մա՛լ կար։ Այն է՝ Թիւրքիա յետամնացերկիր մըլլալով՝ ապրուստի միջոցները բոլորովին անբաւական էին անոր, այնպէս որ շատ անգամ ո՛չ միայն բանուոր դասակարգը, այլ նոյնիսկ արհեստաւորը, վաճառականը և երկրագործը կսնանկանար ու անօթութեան, թշուառութեան ենթակայ կըլլար իր զաւակներով։

Այսպէս գաղթականութեան ծնունդ տուող բռնութեան արհաւիրքէն, կեանքի և ինչքի անապահովութենէն, մասնակի կոտորածներէն զատ՝ տնտեսական տագնապն ու զարգացման և յառաջադիմութեան արգելք եղող միջոցները աւելի և աւելի յարաճուն հոսանք մը ստեղծեցին գաղթականութեան, որից սարսափելի աշխատանքէ զուրկ մնացող դասակարգը յուսահատ հրապարակ նետուեցաւ, ճամբորդութեան մախաղը կրնակն քաշաւ, տուն ու տեղ, սիրելի ծնողք և ընտանիք թողուց և լեռներէ, ձորերէ, ընդարձակ դաշտագետիններէ, կատղած ովկիանոսներէ անցաւ ու շունչը առաւ այս օտար ափանց վրայ։

Սիրվարդ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

20 Ապրիլ, Սովուջբուլաղ.

Ճորտութիւնը վերսկսում է մեր երջանում

Երկրի անպաշտպան վիճակից օգտուելով՝ մեր կողմի քիւրդ գիւղատէրերը սկսել են հին բռնութիւնները նորից գործադրել թշուառ գիւղացիների վրայ։

Հաջի Էլ խանին որ անցեալ տարի մեծ անգթութեամբ Դարալաք գիւղից դուրս թափեց հայ գիւղացիութիւնը, նրանցից 3—4 տուն ուժով պահեց, որոնք արհեստաւորներ էին և իրեն հարկաւոր։ Թշուառ ճորտերը քանիցս անգամ դէս դէն դիմեցին բայց անօգուտ։ Գանգատները մնացին ձայն բարբառոյ յանապատի։ Վերջապէս յուսահատութիւնից տիրող դութը շարժելու համար, դիմեցին Բայիզ աղին, որը Հաջի Էլ խանի մեծ տղան է։ Վերջինս մեծ ուրախութեամբ մի հրամանագիր տուեց նրանց որ կարողանան ազատ և անվնաս դուրս գալ գիւղից։ Բայց Ալի աղան, Հաջի խանու փոքր տղան չի թողել դուրս գան, սպառնալով որ եթէ դուրս գաք ճամբին կը կողոպտուէք և կսպանուէք[1]։

Սիրուս Արէլեան

---

28 Մարտ Էնզէլի

Ամսոյս 22-ին Քարգարի գնացող Ռուսական զօրաբանակը 24-ին առանց դիմադրութեան հանդիպելու տեղ է հասել։ Ինչպէս եկողներն են պատմում բացի այն, որ դիմադրութիւն ցոյց տուող չի եղել որպէս նախքան զօրքի շարժուելն լուր էր տարածուել իբր թէ Քարկարցիները պատնէշներ են շինում դիմադրելու, այլ ամբողջ Քարկարին ընդ առաջ գնալով ուզել է եղներ գոհաբերել։ Մի բան, որ թոյլ չի տալ բանակի հրամանատարը։ Այն Քարկարին որ 5 երկար տարի անիշխանութիւն էր անում, ոչ սահմանադրական կառավարութիւն էր ճանաչում և ոչ կալուածատէր ամիր Սալթանին, այժմ առանց դիմադրութեան խնարհ հպատակութիւն է ցոյց տալիս։ Շատ ուրախալի է որ քարկարցիների մէջ խելքը գլխին մարդիկ են գտնուել՝ առիթ չտալով կատաղածի և նորանոր կորուստների։

Ինչպէս լսում ենք, զօրքը հասած օրը հրամանատարը յայտարարել է, որ 24 ժամուան ըմբոստացքում ումը զէնք ունի թող բերի յանձնի, հակառակ պարագայում կդիմեմ ոչ ցանկալի խիստ միջոցների։ Կարծւում է զինաթափութիւնը վերջանալուց յետոյ Սալար Ասադին դատաւոր թողնելով՝ զօրքը կշարժուի դէպի Արդաբիլ։ Վերջապէս շատ ցանկալի է Քարկարու անիշխանութեան վերջ տրուի։ Այն օրուանից երբ սահմանադրական դիմակի տակ մտաւ Պարսկաստանի այդ մասը, աւելի չարիքների բուն եղաւ քան միւս կողմերը։ Նախկին ռէժիմի օրօք այնքան իզուր մարդասպանութիւններ չէին եղել, որքան վերջին տարիներս, դեռ մի կողմ թողնենք թէ որքան պարսիկներ են սպանուել, և սպանիչներն էլ անպատիժ մնացել։ Այս միջոցներիս 2 հոգի էլ հայ է սպանուել։ Ասատուր Յովսէփեան անունով Թաւրիզեցի (աշքաղ անայու) տղան Քարկարում խանութ ունէր. զբաղւում էր նաև բրինձի առևտրով։ 1907 թուականին Մայիս 7-ին երբ քարկարցիները քարու քանդ արեցին Ամիր Սալթանի տունը, դատաւորը փախաւ։ Այդ անիշխանութիւնից 2 օր յետոյ ամբոխը յարձակուեց Ասատուրի վրայ սպանելուց յետոյ փողոցներից քաշկրտելով ձգեց շուկայի մէջ, 2 օր շուկայում մնալուց յետոյ մի հայու իրաւունք տուեցին դիակը վերցնելու։ Էնզէլուց տասնեակ հեռագիր և բողոք տրուեց Թէհրան այն ժամանակուան պառլամենտին, այն պառլամենտին, որ հայի արնագին 25 թուման էր բրուշած։ Այդ օրից 5 տարի անցաւ միոչ օրս դեռ բաւարարութիւն են տալիս ան մեղ սպանուածին։ Բաւական չէ որ խեղճ մարդուն սպանեցին, նոյա ունեցածն էլ օրը ցերեկով թալանեցին և անպատիժ մնացին ու մնում են։ Մի հայ էլ այս

[1] Կարապետ սրբազանի ինչ որ կարգադրութեան մասին էիք գրել։ Մենք անմիջապէս դիմեցինք Նորին սրբազնութեան այդ լուրը ստուգելու համար։ Յայտնեցին, որ ամենևին այդպիսի կարգադրութիւն չի արուած քահանային։ Այս բացատրութեան հետևանքով այլ ևս Ձեր վերջի տողերը աւելորդ համարեցինք տպագրել։ Թարգմանակիցէք գրել։

Ծ. Խմ.

տարուան Յունվար 8-ին սպանեցին էլի Քարկարում։ Սպանուածը Ղարադաղի Գերմընաւ գիւղացի էր, Կարապետ անունով, 350 թուման փող վերցրած գնալիս է եղել Աստարայից փոյտ կտրող մշակներ բերելու։ Կարապետը գնալուց 15—20 օր անցնելուց յետոյ նրա ընկերը երբ տեսնում է լուր չկայ, մարդիկ է ձգում փընտռելու, վերջապէս հետքը գտնում են։ Մի տանից դուրս է գալիս սպանուածի մօսին հրացանը և շորերը, մի այլ մարդու մօտ՝ ձին։ Երբ իմացում է սպանուածի ով լինելը։ Ռուսաց հիւպատոսարանի միջոցաւ պարսիկ կառավարութիւնից պահանջում են մարդասպաններին պատժել, պարսիկ կառավարութիւնը պատասխանում է. որովհետև Քարկարին տարիներից ի վեր ըմբոստացել է և մենք դատաւոր չունինք այնտեղ, ուստի այժմ ձեռնհաս չենք պատժելու չարագործներին (ինչպէս խաղաղութիւն լինելուց յետոյ հարկաւոր պատիժը կորուի)։ Խալխալցի ամին աշայիրի եղբայրը Բայիկ խանը հալածուելով միւս Շահսեվան ցեղեցից 2 ամիս առաջ եկել միացել էր Քարկարու խառնակիչների պարագլուխների հետ, այժմ նա էլ է փախել Խալխալ։

Անհաcs

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

XXX

1882—1912

ԿՈՉ[1]

Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի Մանկավարժական խորհրդի ձեռներէցութեամբ կայացած ժողովը, որին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, Ճեմարանի և Վաղարշապատի ծխական դպրոցների ուսուցիչներ, Սինոդի և տեղական այլ պաշտօնեաներ, տեղիս Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը և հասարակութեան բազմաթիւ անդամներ, ընտրեց մի յանձնաժողով պատշաճաւոր հանդիսով տօնելու մեր տաղանդաւոր բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանի գրական գործունէութեան երեսնամեակը։

Յորելենական Յանձնաժողովը որոշեց այս տօնի հանդէսը կատարել առաջիկայ Մայիսի 20-ին (նոր տոմարով յունիսի 2-ին)։

Յանձնաժողովը լիայոյս լինելով, որ արդիւնաշատ ուսուցիչ-բանաստեղծի յոբելեանը ջերմ արձագանք կը գտնէ ոչ միայն նորա բազմաթիւ աշակերտների և բարեկամների շրջանում, այլ և հայ հասարակութեան բոլոր խաւերում, խնդրում է նպաստել այս համակրելի տօնի յաջողութեանը։

Շնորհակալութիւններ, ուղերձներ պէտք է ուղարկել Էջմիածին յոբելենական յանձնաժողովի նախագահ Սինոդի անդամ Տ. Բարգէն վարդապետին, (Эчміадзинъ члену Св. Синода Архимандриту Баркену, Russie, Caucase Etschmiatzin) իսկ նուէրները՝ յանձնաժողովի գանձապահ Սինոդի առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ Յովհաննէս Մուշեղեանին (Эчміадзинъ, Чиновнику особыхъ порученій Св. Синода Ованесу Мушегянъ)։

Յանձնաժողովի նախ. Բարգէն վարդապետ
(անդամ Սինոդի)

Փոխ-նախագահ Ս. Կանայեանց
(ուսուցիչ Ճեմարանի)

Արամեան դպրոցի անուամբ էլ ոգ զարկուած է սոյն կոչը։ Ծ. Խ.

Գանձապահ Յ. Մուշեղեանց
Քարտ. Մ. Խոստիկեան
(ուսուցիչ ճեմարանի)
Անդամներ՝
Աբէլ աբեղայ (ուսուցիչ ճեմարանի)
Վառվառէ Կոստանեան, (փ-ն. Բ.Ը.Վ.ճիւղի)
Մ. Աբեղեան (ուսուցիչ ճեմարանի)
Յ. Պետրոսեան (ուսուցիչ ճեմարանի)
Զ. Տէր Մինասեան (բժիշկ)
Ս. Էջմիածին 10 ապրելի 1912.

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

✦ «Միտք»-ը Թաւրիզում հատավաճառ ծախւում է պ. Ալէքսան Բարխուդարեանի մագազինում։

✦ Պ. Մօռնարի խփած հեռագիրը Արամեան դպրոցի 200 թմն. նպաստը տալու առթիւ, հոգաբարձու պ. Ա. Տէր Կարապետեանը ամսոյս 23-ին ներկայացրեց մաքսատան կառավարիչ պ. Ռանսկուն։ Վերջինս «վճարումը» մակագրելով, ներկայացուցեց Ատրպատականի հարկերի տեսչին՝ Վազիր-Մալիին, որ հաւալա տրուեց ամբարի վրայ։ Ստացուել է 100 թմն. միւս 100-ն էլ կստացուի միքանի օրից։

✦ Ամսոյս 23-ին Ղարադաղի Քէլվանի հայ գիւղերի աւերիչ Քեարիմ խանը եկել էր առաջնորդարան, ուր պ. պ. Ս. Յովնանեանի և վաճառականապետ Զ. Նազարբէգեանի ներկայութեամբ առաջնորդը կատարում էր հարցաքննութիւն։ Հայ գիւղացիք փաստում էին մի առ մի իրենցից կորզած 15000 թումանը և 100 հազար թումանից աւելի արժողութեամբ՝ պատճառած վնասները։ Դեռ գործը մինչև մի որոշ տեղ չի հասել, որոշուել է հայ գիւղացիք երդուեն իրենց վնասների քանակի համար և վնասներն ստանան Քեարիմ խանից։ Այս որոշման կուսակից է և Սարդար Աշիդը։

Ցանկալի էր, որ վերոյիշեալ պարոնները ամեն կերպ զօրավիգ լինէին առաջնորդարանին, որ այդ դատը վճռուէր յօգուտ և ի մեծ բաւարարումն քանդուած հայ գիւղացոց։

✦ Մարաղացիներ Եաղուբ Բարաեանի, Ասատուր և Պօղոս Մարգարեանների դրամական վէճը զաւեշտական վախճան ունեցաւ։ Գործը վերջացաւ թէ թեմական խորհրդի վճռով և թէ առանց նրա վճռի։ Զարմանալին այն է, որ յանկարծ Մարգարեանները ազատ թողուեցին Մարաղա մեկնելու, երբ եկել էր Մարաղի գործակալութեան նախագահ պ. Իվան Յովհաննիսեանը, որից աւելի հանգամանօրէն կարելի էր և պէտք էր տեղեկանալ գործի իսկութիւնը, Մարգարեանների, գոնէ, մօտաւորապէս-ճշգրիտ կարողութիւնը։ Սակայն չգիտենք ինչու այդպէս չեղաւ։ Լաւ էր, որ այդ տարօրինակ վճռին միջամտեց պ. Իվանը և այրու համար բաժին հանեց 200 թումման, որից չգիտենք ինչու բաժին էին ուզում հանել Մարաղի դպրոցին։

✦ Այժմ շաբաթը 2 անգամ է փոստ երթևեկում Թավրիզից Մարաղա և Սովուջ Բուլաղ։

✦ Շուջա-Դովլի մամուռներին պատասխանող Իմամ Զումի ըմբոստ գիւղացիներից ոմանք բերուել են Թաւրիզ։

✦ «Մշակ»-ի 40 ամեայ յոբելեանի համար տլստեղ կազմուած է առանձին մասնաճիւղ։

✦ Ցայտնի բանաստեղծ Ց. Յովհաննիսեանի համար ևս, ինչպէս լսում ենք, կազմուելու է մի մարմին։

Ստացուած հրատարակութիւններ

1. «Բազմավէպ» № 2 (փետրվար)

2. «Կայծ» օրգան Ս. Դ. Հնչ. կուս. Պօլսոյ Ուսանողական Միութեան, թիւ 10—11, Ա. տարի։ Հասցէ Rédaction Gaitz post Centrale 97 Constantinople (Turquie) բաժ. 5 ֆր.

3. «Կոհակ» № 13 (88) պատկերազարդ թերթ. գրական. քաղաքական, տնտեսական և ընկերական։ Red. «Gohag» B. P. Centrale Constple.

4. «Երիտասարդ Հայաստան»*) № 15։

5. Էջմիածնական Ինտրիգան և նրա հեղինակները (վերջին կաթուղիկոսական ընտրութեան գաղտնիքը) Ն. Քաջբերունու։ Թիֆլիզ 1912 թ. գինն է 20 կոպ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ճարման Ֆարմանը վիրաւոր և ջարդուած.

Թէհրանից ստացուած մի մթնաւոր նամակ յայտնում է, որ կառավարական զօրքերը, ընդհանուր հրամանատարութեամբ Ֆարման Ֆարմանի, մեծ ջարդ են կրել Սալար-էդ-Դովլից Քիրմանշահի և Կեարուսի մօտերքում։ Ֆարման Ճարմանը քիչ էր մնացել գերի ընկնի, հազիւ մի կերպ վիրաւորը ազատուել է կռուից։ Լուր է պտտւում, որ Թէհրանը այլ ևս չի պատերազմի Սալար-էդ-Դովլի դէմ, այլ մայրաքաղաքի դռները ազատ կթողնուին նրա մուտքի առաջ։

✦ Նոյն նամակից յայտնւում է. Խըզիր կոչուած Պարսկական Արաբների մի ցեղ, որ բնակւում է Ճիրազից մինչև Բէնդէր-Բուշիր, 80000 սպառազէն մարդէանցով միւս կողմից պիտի գայ միանայ Սալար-էդ-Դովլի հետ, արշաւելու Թէհրանի վրայ։ Մինչին Պարսկաստանը չափազանց խառն է։

ԱԶԳԱՅԻՆ

Դաշնակցութեան գործով դատապարտուած են տաժանակիր աշխատանքի 3-ը, աքսորի 26-ը, բանտ 21-ը, կալանաւորական վաշտը՝ 1-ը, արդարացած են 94-ը։

✦ Օսմանեան պարլամենտական նոր ընտրութիւնների առթիւ հայ կուսակցութիւնները կազմել են զանազան բլոկներ տաճիկ կուսակցութիւնների հետ։ Դաշնակցականները միացել են Իտտիհատի հետ։ Սալօնիկի Ս.Դեմոկրատիան բոյկոտ է յայտարարել այս ընտրութիւններին։ Եւրոպակ. Ս. Դ-ներն էլ բուռն բողոք են յայտնել Իտտիհատի բռնութեանց դէմ։ Ս. Դ. Հնչակեանները միացել են Իթթիլաֆ (համաձայնութիւն և համերաշխութիւն) տաճիկ կուսակցութեան։ Մամուլը գնահատում է Հնչակեանների տէսակէտը։ Իթթիլաֆները Կ. Պոլսում ձեռնպահ են մնացել այս ընտրութիւններին։ Յոյներն ու Բոլգարներն ևս ձեռնպահ են մնացել ընտրութիւններում։ Առողջ և անշահասէր տարրերը գործում են այնպէս, որ յայտարարուի անվստահութիւն դէպի Իտտիհատը, որ երկիրը տանում է դէպի կործանում և դէպի նեղ Նացիոնալիզմ։

Մեզ վրայ չափազանց թոյլ տպաւորութիւն թողեց նախկին խմբագրուածների համեմատութեամբ։ Պէտք է գործի գլուխ բերել լուրջ և կոմպէտէնտ մարդ, վերականգնելու այդ թերթի նախկին հմայքը։ Մ. Գ. Եղիայի յօդուածն էլ չատ գէշ տպաւորութիւն թողեց ընթերցողների վրայ։ Ինացել է մեծ պետութեանց հասցէին անհարկի ածականներ տալու և ապպասիրական տիտղոսները չռայլելու աննպատակ գործելակերպը. ժամանակ է վաղ անցնել այդ կերպի «չերմ ազգասիրութիւնից»։ Պէտք է աչալուրջ լինել և գիտակցել, որ տաքգլխօրէն ապտակուած պետութեան սահմաններում ապրում են $2^1/_2$ միլիոն հայեր, որոնք անտեղիօրէն կարող են տուժել մեր այդ ձեի «յեղափոխական» գործելակերպի երեսից։ Մեր փրկութիւնը ուրիշներին, այն էլ գօրեղներին, վատ ասելու և վատ որակումներ տալու մէջ չէ։ Ծ. խ.

Հայոց Թեմական տպարան

ՊՕՍՏԱՐԿՂ

Թաւրիզ.—Բաժնեկների հաշուին ստացել ենք (տես «Միտք» № 6)
Պ. պ. Կ. Արզմ.—ից, Զ. Բուդղ.—ից, Ս. Բուդղ.—ից, Գ. Արզմ.—ից, Դր. Մլ. Ազ. ից, Ն. Մլ. Բարսեղ.—ից, Թ. Ամթ.-ից, Մ. Կիրակոսեանից, Խ. Ս.—ից, Ռ. Ժ.-ից, Հ. Գրիգ.-ից Ց. Մ Ց.—ից, Մ. Նազարբէգեանից, Եղբ. Մլ. Զոհ.—ից, Աւետիս խանից, Մ. Տ. Ման. -ից, Ա. Տ. Ց—ից, Ս. Ե—ից, Ա. խան Ա.—ից, Ց. Քարաեանից, Ց. Զ—ից, Բուլղարից, Մ. Տ. Զ—ից, Ց. Դ—ից Մ. Ք—ից՝ Դր. Ա. Տ. Ս—ից 14—ական Կրան.
(Զարսունակելի)

Սովուջ Բուլաղ.—պ. Գ. Ց. Ց—ին.—այս տեղ շնորհակալութեամբ Ձեր հաշուին ստացանք 20 դրան.

Էնգելի.—Պ. Բ. Մ—ին. Ստացանք Ձեր փոխադրած 300 դրանը։ Խորին շնորհակալութիւններ Ձեզ՝ ձեր ջանքերի համար։ Մեր դժգոհութիւնները այն «բարեիրիզ» պարոններին, որոնք անցեալում և ներկայում երկար ժամանակ թերթ ստանալուց և ընդունելուց յետոյ, պարտականութիւն չեն համարել վճարել իրենց բաժնեվճարները և այդ անպարտաճանաչութեամբ Ձեզ ու մեզ պարտքի են ենթարկել։

Ուրմի. Մեր բաժանորդներին. խնդրում ենք չորսով բաժնեվճարը յանձնէք մեր գործակալ պ՝ Ա. Միրզաջանեանին։ Ստացման մասին կիյտնենք «Միտքում»։

Խմբագիր—հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄԱԳԱԶԻՆ ՀԱՐԻՋ"
Propriétaire J. D. Thomassian

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Նորերս ստացել եմ կանացի ամառային ընտիր կտորներ, բատիստ բլուզներ 8—14 դրան.

Սպիտակեղէններ, Կարսէթներ, Մետաքսէ իւպկաներ և թաշկինակներ ՊԵՐՓԻՒՄԵՐԻ

Օդը կօլոն, օճառ խիստ աժան, կոնեակի, լիքորի, բորդոյի, շամպանյի, գարեջրի և ջրի յատուկ բաժակներ և սերվիսներ։

Սալօնի հրաշալի սեղանիկներ զանազան տեսակի և արժէքի։

Ցդամարդկանց կակուղ քօլեր, ամառային շապիկներ։ Գրպանի անգրիական ժամացոյցներ կարանոի երկու տարուան—16 դրան.

Կանացի գլխի մօդնի զարդարանքներ, խաղի ընտիր կարտեր, կօշիկներ և գրամաֆօններ խիստ աժան և ընտիր։

Ընդունում են ամեն տեսակ պատուէրներ գաւառներից և քաղաքի խանութպաններից, և մեծ քանակութեան համար փոքր կոմիսիայով կբաւականանայ։

ԹԱՒՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Վերսկսուել է երթևեկ և զիշերօթիկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր առ. ժ. 10—12։

Այն աղքատները, որոնք պ. Բայլարբէգուց վկայական կունենան, կը բժշկուեն ձրի։

Հիւանդանոցի կառավարիչ բժիշկ
Վահան Գէորգեան

ТАВРИЗСКАЯ ГОРОДСКАЯ Больница

Возобновился амбулаторный и стаціонарный пріембольныхъ, ежедневно отъ 10—12 часовъ.

Бѣдные по запискѣ отъ г. Байларбеги принимаются безплатно

Завѣдующій больницей докторъ
Ваганъ Геворковъ

ԳԱՐՈՒՆ

(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍԿ ԲԺՇԿԵԱՆԻ)

ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ—ստացած ապրանքներ Ապրիլի 4 ին.

1. Ցդամարդկանց ամառային խրսիրէ գլխարկներ, 2. վարատնիկները ամուր պահելու ռեզիններ, 3. սպիտակ ընտիր քաթաններ, մետաքսէ կտորներ, սպիտակ պիկէներ, երեսի շապկացուներ, անտառացուներ զանազան գոյների։ 4. Ցդամարդկանց դիագօնալ խակի կտորներ, 5. Գուլպաների ռեզիններ, կանացի թաշկինակներ, փղրկպաներ և այլն և այլն։

Մեր խմբագրատանը ծախւում են

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

Ռուս—Հայ բառար.	6 ր.	աշակ.	Հ	
,, ,, ,,	7 ,,	ոչ-աշակ.	,,	
Հայ—Ռուս բառար.	$5^1/_2$,,	աշակ.	,,	
,, ,, ,,	6 ,,	ոչ աշակ	,,	

„ԱՐՕՐ" Ընդհանուր—գրական գեղարուեստական գիտական, հասարակական և խաղաղասիրական միամսեայ հանդէս. 3 րդ տարի բժնեգինն. է 6 ռուբլի՝ Հասցէ Tiflis Rédaction de la revue arméniénne „AROR" Խմբ հրատարակիչ՝ Հ. Սոքելեան։